

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑՈՒ «ԺԱՄԱՆԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ» ՄԵՋ ՀԱՆԴԻՊՈՂ
ՄԻ ՔԱՆԻ ԲՅՈՒՋԱՆԳԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ. Մ. ԲԱՐԹԻՅԱՆ

1. «Թիմացիք և Տաշխամատացիք»

Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ պահպանվել է բյուզանդական հայազգի կայսր Հովհաննես Չմշկիկի (969—975 թթ.) մի ընդարձակ թուղթը՝ հասցեագրված հայոց Աշոտ Գ Ողորմած թագավորին¹։ Այդ թուղթում բյուզանդական կայսրը ամենայն մանրամասնությամբ նկարագրում է Ասորիք, Պաղեստին, Փյունիկե կառարած իր արշավանքի մասին ընդդեմ արաբների, մեկ առ մեկ թվում այն քաղաքներն ու գավառները, բերդերն ու ամրոցները, որ նա գրավեց, նշում այն հսկայական ավարի մասին, որ նա ձեռք բերեց այդ շրջաններում։

Չմշկիկի թղթի հունարեն բնագիրը կորել է, այն մեղ հայտնի է Մատթեոս Ուռհայեցու պատմական երկում պահպանված նրա հայերեն թարգմանությամբ միայն, որը լայնորեն օգտագործվել է և՛ հայագետների, և՛ բյուզանդագետների կողմից²։

Մանրամասն կանգ առնելով «Վոխտոնի» (Բեյրութ), Սիդոնի և Բիբլոսի առման վրա, Չմշկիկը պատմում է նաև ծովափնյա Տրիպոլի քաղաքի դեմ մղած իր կռիվների մասին և ի միջի այլոց ասում. «Եւ առաջ քան զհասանելն մեր ի Տրապոլիս հեծելադօրս առաքեցաք զԹիմացիսն և զՏաշխամատացիսն ի կապանն, որ կոչի Քարերես, վասն զի լուեալ էր մեր, եթէ պիղծ Ափրիկեցիքն անդ նստէին ի կապանին»³։

Դյուլորիեն Ուռհայեցու «Ժամանակագրության» վերոհիշյալ նախադասութիւնը թարգմանել է. „Avant d'arriver à Tripoli (Drabolis) nous envoyâmes la cavalerie des *Thimatsis et des Daschkhadamatsis* (sic!) au défilé de Karérès, parce que nous avions appris que les maudits Africains s'étaient portés dans ce passage“⁴։

¹ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 19—28։

² Տե՛ս G. Schlumberger, *Lépopée byzantine à la fin du dixième siècle* pp. 283—290; N. Adontz, *Notes arméno-byzantines*, II, La lettre de Tzimiscès au roi Ashot (Asot), In *Etudes arméno-byzantines*, Lisbonne, 1965, p. 141—147; Լեո, Պատմութիւն հայոց, հատ. Բ, Երևան, 1967, էջ 589. R. Grousset, *Histoire de l'Arménie*, Paris, 1947, p. 499—500; M. Canard, La date des expéditions mésopotamiennes de Jean Tzimiscès, *Mélanges H. Grégoire*, II (1950) *ինձ անմատչելի*։ G. Ostrogorsky, *Histoire de l'Etat Byzantin*, Paris, 1956, p. 322։ Չմշկիկի նամակի առաջին թարգմանությունը իրականացրել է Գր. Բուչուք Հովհաննիսյանը. Xp. Кучук-Иоаннесов, Письмо Иоанна Цимисхия к Ашоту III. Византийский Временник, т. IX (1903), № 1—2, стр. 91—101.

³ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 25։

⁴ *Chronique de Matthieu d'Edesse (962—1136) avec la continuation de Grégoire le prêtre jusqu'en 1162*, Paris, 1858, p. 21.

Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» առանձին հատվածների երկրորդ թարգմանության մեջ Դյուլորիեն մեզ հետաքրքրող նախադասության թարգմանությունը թողել է անփոփոխ, միայն ուղղել մի տպագրական սխալ (սխառանակ Daschkhadamatsis Daschkhamadatsis)⁵:

Քր. Քուլուք-Հովհաննիսյանը տվել է սույն նախադասության հետևյալ թարգմանությունը. «До прибытия нашего в Траполис, мы выслали вперед конницы Тимаци и Ташхаматаци в ущелье Каререс, ибо до нас дошел слух, что там, в ущелье, засели поганые африканцы»⁶:

Ուլքե՞ր ևն թաքնված «Թիմացի»-ների և «Տաշխամատացի»-ների տակ: Ինչքան մեզ հայտնի է, այդ բառերը բացատրելու միակ փորձը կատարել է Դյուլորիեն: Նա ենթադրում է, որ «Թիմացի»-ն ծագում է հունարեն «Թեմաչից» և որ այն նշանակում է բյուզանդական կայսրության ցամաքային զորամասերը, ինչպես նաև նրանցից կազմված գվարդիան: Ինչ վերաբերում է «Տաշխամատացիք»-ին, ապա ըստ Դյուլորիեի դա անկասկած հունարեն աղավաղված բառ է, այն է ταξιων-ը (ծիշալը՝ ταξιων) կամ ταξιων-ը (ծիշտը՝ ταξιων), որ նրա կարծիքով նշանակում է «garrison»: Դյուլորիեն միաժամանակ հնարավոր է գտնում այդ բառի տակ տեսնել Թեոփանեսի ժամանակագրության մեջ հիշված ταξται բառը, որը Անաստասիոս Բիբլիոթեկարիոսը՝ Թեոփանեսի ժամանակագրության լատիներեն թարգմանիչը թարգմանել է «milites praesidarii»⁷:

Քր. Քուլուք-Հովհաննիսյանը Դյուլորիեի ենթադրության վրա ոչինչ չի ավելացնում. նա պարզապես արձանագրում է Դյուլորիեի կարծիքը:

«Թիմացիք» բառի վերաբերյալ Դյուլորիեի ենթադրությունը ճիշտ է, այն հիմնված է բյուզանդական շրջանի «թեմա» (այսինքն բանակաթեմ իմաստով) բառի վրա, բայց ավելի ճիշտ կլիներ, իհարկե, դրա տակ տեսնել թեմատիկոս (θεματικός) բառը, որ բաղկացած է «թեմա» բառից և -իկոս (-ικός հայերեն -ացի) վերջածանցից:

Ինչ վերաբերում է «Տաշխամատացիք»-ին, ապա Դյուլորիեի բացատրությունը միանգամայն սխալ է և անընդունելի: Ճիշտ է, «տաքսատիոն» նշանակում է կայազոր, բայց Ուռհայեցու բնագրից ամենևին էլ չի երևում, որ խոսքը կայազորի մասին է: Իսկ «տաքսիդիոն» բառն էլ «տաքսատիոն»-ի հոմանիշ չէ ամենևին: Տաքսիդիոն նշանակում է ճանապարհորդություն, կամ արշավանք:

«Տաշխամատացիք» անկասկած աղավաղումն է բյուզանդական շրջանի «տաղմատիկոս» (ταγματικός, հոգն. ταγματικοί), բառի, որ բաղկացած է «տաղմա» (τάγμα) զորամաս, զունդ, միջնադարյան հայկական տերմինով արտահայտված զրոշ բառից և -իկոս (— ικός, հայերեն -ացի) վերջածանցից:

Բյուզանդական բանակը բաղկացած էր երկու մասից, թեմատաներից և տաղմատաներից: Առաջինները ներկայացնում էին նահանգների, բանակաթեմերի զորքերը, իսկ տաղմատաներն այն զորքերն էին, որոնք կենտրոնացած

⁵ Recueil des Historiens des Croisades, Documents Arméniens, t. I, Paris, 1869, p. 17—18.

⁶ Хр. Кучук-Иоаннесов, укр. соч., стр. 99.

⁷ Chronique de Matthieu d'Edesse, p. 383: Recueil des Historiens des Croisades, p. 17, n. 1, 2.

⁸ E. A. Sophocles, Greek Lexicon of the Roman and Byzantine Periods, vol. II, p. 1068.

էին մայրաքաղաքում կամ նրան մոտիկ նահանգներում՝ Թրակիայում, Մակեդոնիայում և ալպեյան կոչված Պերատիկա շրջանում Բոսպորի ասիական կողմում: Բանակաթեմերի զորքերը զխալոորում էին բանակաթեմերի զորավարները, իսկ տաղմատաները՝ դոմեստիկոսները: 9-րդ դարում հիշվում են չորս տաղմատա, այն է Սյուլարիոսներ, էքսկուրիտոսներ, Արիթմոսներ և Հիկլանատոսներ⁹:

Տաղմատաների մասին մանրամասն տեղեկություններ են տալիս արաբական աղբյուրները: Կուդաման իր «Քիթաբ ալ հարաջ» աշխատության մեջ գրում է հետևյալը. «Կոստանդնուպոլիս, արքայանիստ քաղաքի կեցող զորաց թիվը 24.000 կհաշվվի, որոնց 16.000-ը ձիավոր և 8000-ը հետևակ են: Զիավորները չորս դնդի կբաժանվին: Առաջինը 4000 հոգով կկացուցանեն Սկուլարյան գունդը, մեծ Դոմեստիկի հրամանատարության տակ, միևնույն ժամանակ նաև ընդհ. Հրամանատար է բուլանդակ բանակին և կարգադիր զորաժողովներու: Երկրորդ գունդը նույնպես 4000 հոգով, կկոչվի — Տակսիս: Դրունգարի մը հրամանին տակ դոմսիդ՝ նմանապես 4000-է բաղկացած, երրորդ — եկսկուրիտա (ἐκσχυρίται) գունդը կներկայացնեն անձնապահաց դասը: Զորորդը Սկուլարյանը՝ 4000 հոգով, որոնք թագավորին ճամբորդությանցը միշտ կընկերանային: Հետևակազորն երկուքի կբաժանվի, մին կկոչվի՝ Ոսլտիմատիս, մյուսը՝ Նումերա յուրաքանչյուրը 4000 հոգով»¹⁰:

2 «Մեծ իշխան Տելիուրխ»-ի մասին:

1045 թ. Անին գրավելուց և Բագրատունյաց թագավորությունը վերացնելուց հետո, ինչպես վկայում են Արիստակես Լաստիվերցին և Մատթեոս Ուոհայեցին, բյուզանդացիները պատերազմի են բռնվում Դվինի արաբ ամիրա Աբու-լ-Ասվարի հետ: Իբերիայի և Անիի կատապան Միքայել Իասիտը «բաղում զօրօք խաղայ ի վերայ քաղաքին Դունայ: Իսկ Ապուստոար տէր քաղաքին պատերազմ տուեալ ընդ նմա, անչափ կոտորածս առնէ ի դուռն քաղաքին, յորում տեղուջ մեծաւ մեծ իշխանն Հայոց հանդերձ որդւովն, որ մեծ սուղ հասոյց Հայոց»¹¹:

Այս դեպքերը Ուոհայեցին ներկայացնում է հետևյալ կերպ. «Յայսմ ամի (նՂԴ) և յաւուրս աշնանային խաղաց զօրքն Հոռոմոց և զնացին ի վերայ քաղաքին Դվնայ. և ի խմբել պատերազմին՝ բարկութիւն հասանէր յԱստուծոյ ի վերայ զօրացն Հոռոմոց և լինէին պարտեալք յերեսաց այլազգեացն և դարձան ի փախուստ. և եղև կոտորած մեծ ի վերայ քրիստոնէիցն, և բազումք ի զօրացն Հոռոմոց անկան ի սուր և ի գերութիւն, ընդ որ և մեծ սպարապետն Հայոց Վահրամ հանդերձ որդւովն իւրով Գրիգորիւ սպանաւ ի մեծ պատերազմին ի Դուին քաղաքին»¹²:

Միքայել Իասիտին այս պարտությունից հետո, Լաստիվերցու տվյալներով, փոխարինում է «Կամենաս ոմն, ի չորեքհարիւր իննսուն և երեք թուակա-

⁹ J. B. Bury, The Imperial administrative system in the ninth century with a revised text of the Kletorologion of Philotheos, London, 1911, p. 47—48: Այսին մանրամասն տե՛ս H. Glykatzis-Ahrweiler, Recherches sur l'administration de l'empire byzantin aux IX—XI^e siècles, Paris, 1960, p. 24—26.

¹⁰ Հ. Գեղեցիկ, Սկզբնավորությունք բյուզանդական բանակաթեմերու դրություն, թարգմ. Գ. Գարանֆիլյանի, Վիեննա, 1903, էջ 50, ծան. 1:

¹¹ Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցու, Երևան, 1963, էջ 63:

¹² Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրություն, էջ 98:

նրա մերոյ»։ Լաստիվերցին այնուհետև խոսում է այս Կամենասի դեպի հայոց կաթողիկոս Պետրոսը բռնած դիրքի մասին, իսկ Դվինի ամիրա Աբու-լ-Ասվարի դեմ բյուզանդացիների շարունակած պատերազմի մասին նա չի հիշատակում։ Այդ մասին գրում է Ուռհայեցին. «Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՆՂԾ ամին զօրաժողով արարեալ Մոնոմախ թագաւորն Հոռոմոց և կացուցեալ զօրագլուխ զմեծ իշխանն Հոռոմոց՝ որում անուն ասէին Տելիար»¹³ կուրտ և ներքինի դուրս, և զայր ահագին բազմութեամբ և անթիւ զօրօք ի վերայ քաղաքին Դվնայ, և բանակ հարկանէր ի դուռն քաղաքին. և էր ի ձմեռային ժամանակն. և ի սաստկութենէ սառնամանեացն և ի բախմանէ առատաբուռի անձրևացն ոչինչ կարաց առնել, այլ դառնայր անյաղթելի և խաղայր գնայր ի Հոռոմոց աշխարհն։

«Իսկ յորժամ փոխեցաւ թուականն Հայոց յամս ՆՂԶ, դարձեալ գայ Տելիարն զօրօք բաղմօք և իջանէր ի վերայ քաղաքին Դվնայ. և բազում շարշարանս և տագնապս դուրձեաց այնմ գաւառին և սրով և գերութեամբ ապականեաց զամենայն աղզն Տաճկաց և դարձաւ յաշխարհն Յունաց խաղաղութեամբ»¹⁴։

Ուռհայեցին սրանից անմիջապես հետո գրում է, թե «Յայսմ թուականութեանս Հայոց պատրիկ ոմն՝ անուն Թոռնիկ, ապստամբեաց ի վերայ Մոնոմախին»։

Լեոն Թոռնիկի ապստամբությունը տեղի ունեցավ 1047 թ. սեպտեմբերին. հետևաբար «Տելիարիս»-ի այս վերջին արշավանքը դեպի Դվին Ուռհայեցու կողմից միանգամայն ճիշտ է թվագրված ($496 + 551 = 1047$ թ.)։

Բայց ո՞վ էր «Տելիարիս» իշխանը։ Ավելորդ չէ այստեղ մեջ բերել Դյուլորիեի թարգմանությունը. «Monomaque leva des troupes et les plaça sous le commandement de l'un des plus hauts dignitaires de l'empire, l'eunuque [Catalalon le Brûlé] Téléarche (Deliarkh)»¹⁵։

Ստացվում է, որ խոսքը Կատակալոն Կեկավմենոսի մասին է (Լաստիվերցու Կամենասի), որի աստիճանը téléarche (deliarkh) էր։ Բյուզանդական այս աստիճանի մասին Դյուլորիեի բացատրություն է տալիս իր ծանոթագրությունների մեջ. «C'est le grec télarchès, commandant d'une légion ou d'un corps d'armée»¹⁶։ Բայց նախ և առաջ Կեկավմենոսը ներքինի չէր¹⁷, բացի այդ նա «տելարիս» էլ չէր¹⁸, այլ Իբերիայի և Անիի կատապանը կամ դուկը։

Առեղծվածային «Տելիարիս»-ի բացատրությունը տալիս են բյուզանդական աղբյուրները, այս դեպքում Սկիլիցես-Կեդրենոսի նշանավոր ժամանակագրությունը, որի հարուստ և՛ արժեքավոր տվյալները առատ լույս են սփռում նաև Անիի անկմանը հաջորդող շրջանի վրա, այն է վերոհիշյալ դվինյան դեպքերի վրա, դեպքեր, որոնք շատ ժլատ գծերով են սկարագրված Արիստակես Լաստի-

¹³ Գրչագրերում հանդիպում է «Տելիարիս» ընթերցումը։

¹⁴ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 100։

¹⁵ Chronique de Matthieu d'Edesse, p. 81.

¹⁶ Ibidem, p. 402.

¹⁷ 1169 թ. մի մագաղաթյա ավետարանի հիշատակարանում գրված է, որ Սասունի իշխան Վիգենը իր դուստր Կատային կնության է տալիս «Շահինշահի որդու Գրիգորի թոռնի Կատակալոսի որդու Կամենի մեծի»։ Տե՛ս Գ. Սրվանձատյանց, Թորոս Աղբար, հատ. Բ, Կոստանդնուպոլիս, 1884, էջ 313։ Ներքինին որդի չէր կարող ունենալ։

¹⁸ Տելարիսը (τελαρχης) զինվորական ոչ բարձր աստիճան էր, մեկ տելոսի (τελος) հրամանատարը. մեկ տելոսը հաշվում էր ընդամենը 2648 հոգի։

վերցու և Մատթեոս Ուռհայեցու պատմական երկերում: Ավելորդ չէ այստեղ շարադրել այդ փաստերը, նամանավանդ, որ առանց դրանց պարզ չէր դառնա Անիի գրավումից հետո բյուզանդական զորքերի դեպի Դվին կատարած արշավանքների պատճառը:

Սկիզբիցս-Կեդրենոսի «Ժամանակագրության» համաձայն, Կոստանդին Մոնոմախ կայսրը, նախքան Անիի վրա հարձակվելը, բանակցությունների մեջ է մտնում Դվինի արաբ ամիրա Աբու-լ-Ասվարի հետ (Ապլեսֆարես), առաջարկելով հարձակվել Բագրատունյաց թագավորության վրա և ավարտել նրա նահանգները: Աբու-լ-Ասվարը համաձայնվում է դրան մի պայմանով, որ այդ պատերազմի ժամանակ Գաղիկ թագավորից խլած բերդերն ու շրջանները պիտի իրեն, Աբու-լ-Ասվարին պատկանեն «պատերազմի օրենքով»: Բյուզանդական կայսրը համաձայնվում է: Սակայն Անիի անկումից հետո Կոստանդին Մոնոմախը դրժում է իր խոսքը և Դվինի ամիրայից պահանջում է վերջինիս գրաված շրջանները՝ այն պատճառաբանությամբ, որ Բագրատունյաց հողերը իրեն, կայսրին են ժառանգված: Պարզ է, ամիրան մերժում է և սկսվում է բյուզանդա-գվինյան պատերազմը: Բյուզանդական զորքերի գլխավոր հրամանատարությունը գտնվում էր կայսեր սենեկապետ (սպարակիմոմենոս) և սպարապետ (դոմեստիկոս) պրոեգրոս Նիկողայոսի ձեռքում: Արշավող զորքը գլխավորում էին Իբերիայի դուքս վեստարի Միքայել Իասիտը և մագիստրոս Կոստանդին Ալանը: Նրանք սարսափելի պարտություն են կրում և հազիվ հազ փրկվում Անի քաղաքում: Կոստանդին Մոնոմախը պրոեգրոս Նիկողայոսին և Միքայել Իասիտին պաշտոնանկ է անում: Իասիտի փոխարեն Իբերիայի դուքս է նշանակվում Կատակալոն Կեկավմենոսը (լաստիվերցու Կամենասը), իսկ Նիկողայոսի փոխարեն միահեծան զորավարի պաշտոնը տրվում է «մեծ էտերիայի արխոնտ» Կոստանդինին, որ ներքինի էր և սարակինոս: Աբու-լ-Ասվարի ձեռքից սրանք գրավում են մի շարք բերդեր, այն է Սուրմառին (σῦμα Μαρία), Ամբերղը (Ἀμπέρ), Խոր վիրապը (χώρα Γρυγγόριος) և պաշարում «Դվինի մոտ գտնվող» Ծիծեռնակաբերդը (Φρουρὸν Χελιδνίου): Հենց այդ ժամանակ հաշվառվում է հասնում Լևոն Թոռնիկի ապստամբության լուրը: Նշված հրամանատարները իրենց զորքերով կանչվում են Կոստանդնուպոլիս¹⁹:

Ինչպես տեսանք, զորավար Կոստանդինը ներքինի էր և «մեծ էտերիայի արխոնտը»: «էտերիայի արխոնտը» բյուզանդական աղբյուրներում մեկ բառով կոչվում է «էտերիարխ» (ἐταρειάρχης): Բյուզանդիայում դեռ Վասիլ Ա-ի և Լևոն Զ-ի ժամանակ օտարերկրացի զինվորները մտնում էին այսպես կոչված «էտերիայի» (ἐταρεία) մեջ, որի գլուխն էր կանգնած «էտերիարխը», որը կոչվում էր նաև «Մեծ էտերիարխ» և գլխավորում էր «կայսերական էտերիան» (βασιλική ἐταρεία), այսինքն գլխավորապես օտարերկրացիներից բաղկացած պալատական գվարդիան: Նա անմիջականորեն կայսեր էր ենթարկվում: Կոստանդին Ծիրանածինը ցույց է տալիս, որ կար նաև «Միջին էտերիա»²⁰:

Այս բոլորից հետո պարզ է դառնում, որ Մատթեոս Ուռհայեցու «զօրագրութիւն դմեծ իշխանն Հոռոմոց» որում անուն ասելին Տելիարիս կուրտ և ներքինի գոլով» նախադասության մեջ Տելիարիս անուն չէ, այլ աստիճան, բյու-

¹⁹ Georgius Cedrenus Ioannis Scylitzae ope, t. II, Bonnae, 1838, p. 558—561.

²⁰ J. B. Bury, op. cit., p. 106—108.

վանդական էտերիարխը, որի կրողը տվյալ դեպքում Կատակալոն Կեկավմենոսը չէ, այլ Սկիլիցես-Կեդրենոսի հիշած մեծ էտերիարխ ներքինի սարակինոս Կոստանդինը:

О НЕКОТОРЫХ ВИЗАНТИЙСКИХ ТЕРМИНАХ В «ХРОНОГРАФИИ» МАТФЕЯ ЭДЕССКОГО

Р. М. БАРТИҚЯН

Р е з ю м е

В пространном послании византийского императора Иоанна Цимисхия армянскому царю Ашоту III, сохранившемся в «Хронографии» армянского историка первой половины XII века Матфея Эдесского (имеется полный перевод послания: см. Хр. Кучук-Иоаннесов, «Письмо Иоанна Цимисхия к Ашоту III, Виз. Временник, т. IX (1903), № 1—3, стр. 91—101), говорится о том, что при взятии города Триполис были использованы войска, названные в «Хронографии» «Тимаци и Ташхаматаци». Автор этой статьи считает, что под ними подразумеваются войска *θαρματικοί* и *ταγματικοί* (армянский суффикс -аци соответствует греческому — *ιστες*).

Матфей Эдесский, рассказывая о походе византийцев против Двинского эмира Абу-л-Асвара в 1047 г., упоминает, что византийское войско возглавлял «великий князь ромеев, которого нарекали «Телиарх». Дюлорье считал, что «Телиарх» не имя, а звание, а именно «теларх», носителем которого в данном случае он считал Катакалона Кекавмена. Матфей Эдесский «Телиарха» считает евнухом, каковым Катакалон не был. Он не был и «Теларх»-ом, а дуком Ани и Иверии. Во главе указанного войска Скилица-Кедрин называет евнуха Константина, который был сарацином и «великим этериархом». Не вызывает сомнения, что «Телиарх» Матфея Эдесского является византийским воинским званием «этериарх». Имя этого этериарха дает Скилица-Кедрин.